ԶԱՐՈՒՀԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա
ՀՏԴ 7.071.1

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԿԱԼԸ
(մտորումներ Մարտին Պետրոսյանի ստեղծագործությունների շուրջ)

Բանալի բառեր և արտահայտություններ. Հորինված միջավայր, անիրական մարդիկ, վերերկրային, միստիկական, դեկորատիվ, պայմանականություն:

Ключевые слова и выражения: вымышленная среда, нереальные люди, внеземное, мистические, декоративность, условность

Keywords and expressions: fictional environment, unreal people, extraterrestrial, mystical, fairy tales, decorative effect, harmony and integrity

20-րդ դարի 60-ական թվականներին հայ կերպարվեստի ասպարեզում հայտնվեց գեղանկարիչ և գրաֆիկ Մարտին Պետրոսյանը, ով կարողացավ ստեղծել սեփական հեքիաթային աշխարհը՝ բնակեցված գերհույզերով և զգացմունքներով ապրող մարդկանցով:

Նկարչի ստեղծագործական ուղին կարելի է պայմանականորեն բաժանել երկու շրջանի՝ վառ և մոնոքրոմ գույների շրջաններ:

Երկու շրջաններում էլ նա ստեղծում է հավաքական պատկերներ, միացնելով գաղափարներ, մտքեր՝ ստանում է համայնապատկերային հնչեղ ստեղծագործություններ:

Վաղ շրջանի գործերում նկատելի են թե՛ կուբիզմի, թե՛ գոգենյան վառ գունապնակի ազդեցությունները: Նկարչի համար կարևորը դառնում է գույնը, որով նա ստեղծում է հարթային դեկորատիվ պատկերներ: «Ընկերուհիներ» (1961թ., 72,5x55, կտավ/յուղաներկ, նկ. 1) աշխատանքը կառուցված է տաք վառվռուն նարնջագույնների և սառը դեղինների հակադրություններով: Այստեղ նկարիչը ցուցաբերել է դեկորատիվ մոտեցում, բայց միևնույն ժամանակ, կերպարներից յուրաքանչյուրի սանրվածքը, արդուզարդը մանրամասնորեն մշակված են նուրբ վրձնահարվածներով: Աղջիկների ձեռքերում նազանքով պահված ծաղիկներ են, որոնք քնարական տրամադրություն են հաղորդում նկարին: Արտաքին թվացյալ պարզության մեջ կանացի կերպարներն այնքան ամփոփ են և խոսուն, որ դիտողի մտքում ծնում են բազմաթիվ զուգահեռներ՝ սկսած գոգենյան հարթային լուծումներից, ավանդական հայկական խեցեղենում հանդիպող նազանի աղջիկների պատկերներից, մինչև Քոչարի ստեղծագործությունների հերոսները, անգամ եգիպտական որմնանկարները: Եվ եթե եգիպտականը խորհրդանիշեր են, Գոգենինը՝

գունային հրավառություն, Քոչարինը՝ համամարդկային գաղափարախոսություն, ապա Մարտին Պետրոսյանի մոտ շեշտված է ազգայինը: Նրանք հայ են ոչ միայն ընդհանրացված դիմագծերով, միջավայրի գույներով, այլև ներքին հուզականությամբ, դիտողին հաղորդվող հուզականությամբ:

«Աղջիկները սարերում» (1972թ., 140x170, կտավ/յուղաներկ, նկ. 2), «Ընկերություն» (1978թ., 150x130, կտավ/յուղաներկ) կտավների հորինվածքի հիմքում ընկած է հորիզոնական տրոհումը: Պլանային բաժանումները տեղադրված են մեկը մյուսի վրա: Նման կերպ պատկերում էին միջնադարում: Ֆիգուրները ոչ թե միջավայրի մեջ են, այլ, ասես, պատահական են այնտեղ գտնվում: Ֆոնը դիտվում է որպես ուրույն բեմի ետնամաս կատարվող գործողության համար: Այս սիմուլտան՝ միաժամանակյա ներկայությունը, կտավներին հաղորդում է յուրահատուկ ռիթմ, շարժում և դինամիկա: Նկարիչը, ցուցաբերելով դեկորատիվ մոտեցում, պատկերները դարձնում է պայմանական՝ միևնույն ժամանակ դրանց հաղորդելով կատարյալ պլաստիկա: Օգտագործելով սահմանափակ գունապնակ՝ նկարչին հաջողվում է հասնել մեծ արտահայտչականության և հուզականության: Արդեն ճանաչելի դարձած կերպարներում, նրանց հանդերձանքի ձևավորումներում միջավայրում պայմանական դրվագված բծերն ու գծերը կրկնվում են կտավից կտավ՝ ստեղծելով և համալրելով նկարչի ստեղծած թվացյալ պարզ, բայց միևնույն ժամանակ բարդ երևակայական աշխարհը: Այդ պարզունակության մեջ թե՛ կերպարները, թե՛ բնությունը պարզունակ չեն, հակառակը՝ դառնում են սիմվոլների համակարգ, որի վրա հիմնվում է նկարչի աշխարհը: Ֆորման պարզեցված է, սակայն դիտողի կողմից մակերեսորեն չի ընկալվում: Այն բարդ է, քանի որ յուրաքանչյուր ընդհանրացման մեջ դիտողը տեսնում և գտնում է իր երազների աշխարհը և որքան խորանում է, այդքան տեղ կա խորանալու: Այս պատկերների հետ խորհում ես, մտածում, լրացնում՝ դառնալով որոշ իմաստով համաստեղծագործող: Այս կտավները չեն թողնում դիտողին անհաղորդ, դրանք դառնում են կամուրջ-երկխոսություններ դիտողի և նկարչի երևակայության միջև: Եվ, հանկարծ բացահայտում ես, որ այդ երևակայական աշխարհը դարձել է քոնը, որում դու գտնում ես արդեն քեզ ծանոթ և հարազատ դարձած կերպարներին:

Քանի որ չկա շոշափելի սահման իրականի և երևակայության, երկնայինի և երկրայինի միջև, իսկ իրական կյանքը՝ հեքիաթայինի լոկ խամրած արտացոլումն է, գնալով անհայտանում է բաժանող սահմանագիծը և բևեռային տարբերությունը դադարում է գոյություն ունենալ: Մարտին Պետրոսյանի հերոսները գտնվում են թե՛ երևակայական, թե՛ իրական աշխարհներում: Այդ մշտական

փոփոխականության մեջ հանկարծ հասկանում ես, որ այդ հեքիաթայինը քեզ՝ դիտողիդ համար արդեն դարձել է իրականություն: Նկարիչը կերտում է իր տիեզերքը, իսկ նյութականն ու հոգևորը դառնում են միևնույն գաղափարի առանձին սանդղակներ՝ ավարտուն, ներդաշնակ իրական կյանք կոչվող միասնությանը հասնելու համար:

Մարտին Պետրոսյանի սիմվոլիկ մտածողությունը ծնեց մի ներդաշնակ, հզոր, ազնվական համակարգ, ընդգծված օրինաչափությամբ մտքերի և հույզերի համալիր, որը դարձավ նկարչի ներաշխարհի արտացոլումը:

Սիմվոլիկ մտածողության շնորհիվ, նկարիչը միավորում է ժամանակը՝ չգտնելով շոշափելի տարբերություն անցյալի և ներկայի միջև ոչ միայն իրական, այլև տրանսցեդենտալ կյանքում: Նա հաղթահարում է նյութականի և հոգևորի միջև գտնվող հսկայական անջրպետը: Մշտապես ուսումնասիրելով իրական աշխարհը, փորձելով գտնել դրա անտեսանելի էությունը, համադրելով իրականը և հեքիաթայինը, անհայտանում է դրանց միջև եղած սահմանը: Դիտողի «հայացքը» տեղափոխվում է իրականից դեպի երևակայականը, և այս երկու հասկացությունների տարբերությունը դառնում է չնչին: Դա իերոֆանիայի՝ մոգական մտածողության դրսևորում է, որը հնարավորություն է տալիս հասնելու կատարսիսի:

Մարտին Պետրոսյանի ստեղծագործություններում ոչ պակաս դեր է հատկացված այլաբանությանը: Եթե մտահղացումը և միտքը անտեսանելի են, ապա կերպավորման միջոցով նրանք դառնում են տեսանելի և վեր են ածվում այլաբանության:

Նկարչի կտավներում խորհրդանիշը զգայականի և գերզգայականի միասնությունն է, իսկ այլաբանությունը դառնում է զգայականի և ոչ զգայականի միասնություն: Այլաբանությունը գիտակցության վերնաշերտին պրոյեկտած խորհրդանիշն է, այն դառնում է միտումնավոր, դիտավորյալ արտահայտում, այստեղից էլ սպառում է իր սկզբնաղբյուրը: Այն վերափոխում է երևույթը հասկացության, իսկ հասկացությունը՝ կերպարի, որտեղ հասկացությունը արդեն մշտապես հաղորդվում է կերպարի օգնությամբ: Իսկ խորհրդանիշը վերափոխում է երևույթը մտքի, իսկ այնուհետև՝ միտքը՝ կերպարի, և այստեղ միտքը մշտապես մնում է անհասանելի: Այդ պատճառով, նկարչի յուրաքանչյուր ստեղծագործություն դառնում է մտքի գոյության ֆորմա:

1960-ական թվականներին ստեղծած աշխատանքները բազմառճ են՝ մոնունենտալ և կամերային: Հետաքրքիրն այն է, որ հիմնականում աշխատանքների չափերը չեն գերազանցում 150 x 180 սմ, բայց կատարված են այնպիսի ներքին հզորությամբ, լարվածությամբ, որ կարծես հսկայական որմնապատկերներ լինեն; Այդպիսին է 1965թ. ստեղծված «Կոմպոզիցիա»

(142x196, կտավ/յուղաներկ, նկ. 3) աշխատանքը: Այն որոշ իմաստով հիշեցնում է Պիկասսոյի «Գերնիկան» և Քոչարի «Պատերազմի արհավիրքները»: Այստեղ միախառնվել և ի մի է բերվել նկարչի ողջ ներաշխարհը՝ խորհերն ու հուզումները: Նա փորձում է ընդգրկել աշխարհն ամբողջությամբ, հասկանալ և իմաստավորել այն որպես ավարտուն միասնություն: Միայն այդ մոտեցումը կարող է դառնալ իրական, քանի որ աշխարհում ամեն բան փոխկապակցված է: Մարդը միկրոկոսմ է, որը գտնվում է իր նախասկզբի՝ մակրոկոսմի հետ մշտական ներդաշնակության մեջ: Այդ գիտակցումն է, որ օգնում է նկարչին միավորել, սիստեմավորել անհատի դերը արտաքին իրականության մեջ:

Առեղծվածային և շեշտված անհատականության կրողների երկու դիմանկար՝ «Սայաթ-Նովա» (1963թ., 134x106, կտավ/յուղաներկ, նկ. 4) և «Ինքնադիմանկար» (1951թ., 96x76, կտավ/յուղաներկ, նկ. 5): «Սայաթ-Նովա»-ում, ինչպես մի հավաքական համայնապատկերում, հավաքված է այն ամենն, ինչ աղերսներ ունի մեծանուն աշուղի հետ՝ նրա գովերգած նաիրյան աղջիկները, խորը ազգային ներշնչանքով պատկերված սիմվոլիկ բնությունը: Կերպարը քնարական է և ինքնամփոփ. թվում է, թե անձայն հնչում են աշուղի մեղեդիները: Մեղեդայնություն է հաղորդված նրա կեցվածքին և ձեռքի դիրքին: Նկարիչը միջավայրը և այն լրացնող կերպարները ներկայացրել է այնքան դիպուկ և արտահայտիչ, որ նրանցից յուրաքանչյուրը կարող էր առանձին վերնագրվել «Սայաթ-Նովա»:

Նկարչի արվեստում հեքիաթայինի սպասումը նվազեցրեց իրականի և երևակայականի միջև ընկած սահմանը, վայրկենականի և հավերժականի, մարմնի և հոգու, մարդու և Աստծո, սեփական «ես»-ի և օտարացիի: Այս ամենի առջև զրկանքներն ու անհաջողությունները թվացին չնչին և հաղթահարելի: Մարդը ստեղծվեց Աստծո կերպարով և նմանությամբ, ինչը պարտադրում է նրան արդարացնել և իրականացնել այդ նմանության պատրանքը: Մարտին Պետրոսյանի կտավները դիտելիս մտածում ես, որ, հավանաբար, Աստված դարձավ մարդ, որպեսզի մենք կարողանանք դառնալ Աստված («Հեքիաթ», 1975թ., 65x60, խառը տեխնիկա, նկ.6):

Աստվածայինն է դառնում վերջնակետ, հոգևոր աճի և զարգացման իմաստ: Սակայն ձգտելով բացարձակի, նկարիչը ակամայից և չգիտակցված սահմանեց մի եզր, որն անցնել անհնար է, և գուցե չկա էլ դրա անհրաժեշտությունը: Նա ստեղծեց պայմաններ, և ենթարկվեց իր իսկ ստեղծած իրականությանը:

Մարտին Պետրոսյանի ստեղծագործություններին բնորոշ են ոչ կոնկրետ միջավայրը, ոչ իրական մարդիկ, ոչ իրական ժամանակը: Նրա կտավներն, ասես, միստիկ պատումներ լինեն, լեգենդներ կամ դյուցազներգեր, որոնց մեջ արժեքների համակարգը բացահայտվում է

ներդաշնակության և միասնականության մեջ, որտեղ կարևորվում են կերպարները և աշխատանքի ներքին բովանդակությունը: Կատարման միջոցներ են դառնում գույնը, գիծը, ծավալը, հարթությունը, ստվերը: Բնականաբար, այս երկու դրսևորումները /բովանդակություն և միջոց/ չեն կարող գտնվել միևնույն սանդղակի վրա: Եվ այդ ռիթմիկ փոփոխությունն ու տատանումն են, որ որոշում են նկարչի կերտած իրականության անհավասար թրթռուն ռիթմը:

1980-ականներից նկարչի գույները դառնում են մոնոքրոմ՝ միագույն, խամրած, սակայն չեն կորցնում իրենց թափանցիկությունը: Նկարիչն աշխատում է գրեթե մեկ գույնով: Գույնը խամրած է, կամերային: Սակայն նրան հաջողվում է ստանալ ոչ միայն տոնային բազմազանություն, այլև տաք և սառը տոնային համադրումներով կերտել պլանային դասավորություն: Թվացյալ պարզությունը վկայում է խորության մասին, երբ ամեն մի դետալ մտածված է:

Այս շրջանում նկարիչը ստեղծում է հիմնականում կանանց դիմանկարներ (նկ. 8-10) և բնանկարներ: Կանանց կերպարներին բնորոշ է նրբություն, փխրունություն: Հորինված երազային իրականության մեջ այս ճենապակե գեղեցկուհիները եթերային են, որոնք, կարծես, նկարչի մտորումները և տեսիլքներն են: Յուրաքանչյուր կերպարի համար ընտրված է իրեն հատուկ դիմային, ֆիգուրատիվ, օժանդակ գեղանկարչական մշակում: Մի դեպքում առանձին արտահայտչամիջոց են դառնում հետևի պլանին ուրվագծված ոլոր-մոլոր ծավալային գծերը, մյուսի դեպքում՝ ոճավորված մազերը: Որոշ կերպարներ պատկերված են ձեռքերը աղոթողի դիրքում՝ պատկերագրական Օրանտ տիպի նման:

Մարտին Պետրոսյանի կտավները գրավում են գծի հակիրճությամբ, դիպուկությամբ, կայունությամբ և արտիստիկ թրթիռով:

Նրա նկարների մակերեսը բաղդատված է ռիթմիկ հարթությունների և, չնայած նկարիչը հիմնականում կիրառում է անթափանց, պաստոզային ներկեր, հորինվածքը ամբողջովին ողողված է լույսով, որտեղ հատվող ձևերի նուրբ ուրվագծերը ձուլվում են ընդհանուր մթնոլորտին:

Զ. Մանուկյան

Կախարդական իրականության տիրակալը
(մտորումներ Մարտին Պետրոսյանի ստեղծագործությունների շուրջ)

Ամփոփում

Գեղանկարիչ և գրաֆիկ Մարտին Պետրոսյանի ստեղծագործություններին բնորոշ է հորինված միջավայրը:

Վաղ շրջանի կտավներն աչքի են ընկնում դեկորատիվ մոտեցմամբ և վառ գունաշարով: Հասուն շրջանի աշխատանքները կատարված են միանգամայն այլ ոճով. անգամ, դժվար է պատկերացնել, որ դրանք միևնույն հեղինակի գործերն են: Եթե դեկորատիվ և պայմանական մոտեցումը, վերափոխվելով, պահպանված է, ապա գույնը, գիծն ու հորինվածքային դասավորությունը ամբողջովին այլ են: Այստեղ հեղինակը ընտրում է պատկերման բարդ եղանակ՝ օգտագործելով միևնույն գույնի բազմաթիվ երանգներ:

З. Манукян

Работам Мартина Петросяна присущи вымышленная среда,
внеземное время.

Резюме

Ранние работы художника отличаются декоративностью и яркой цветовой палитрой. Картины зрелого периода выполнены в совершенно инном стиле: иногда трудно представить, что это работы одного и того же мастера. Хотя декоративность и условность сохраняются, но цвет, линия, композиционное построение здесь совершенно разнятся. Художник выбирает очень сложный художественный прием: в рамках одного цвета, варьируя его многочисленными тонами.

Z. Manukyan

The potentate of fairy reality

Summary

Fictional environment, images of unreal people, extraterrestrial time are inherent in Martin Petrosyan's works. His pictures are as if mystical fairy tales, legends or powerful narrations.

Early works of the artist differ in decorative effect and bright color palette. Pictures of the mature period are executed in absolutely other style. The artist chooses very difficult artistic touch: within one color, varying by numerous tones. It is difficult to hold a harmony and integrity in similar monochrome painting.